ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Բ. ՄԷՋԻ, ԹԻՒ 512 — 40 | HUITIÈME ANNEE | ՇՈՐԵՔՇԱԲԹԻ 1 / 14 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1908

ՀԱՍՑԷ

Rédaction du Journal arménien
ARCHALOUYCE
(EGYPTE) LE CAIRE

Գլխաւոր խմբագրութեան
ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չե՛ն տրուիր։

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ ծանուցումները կ'ընդունուին մասնաւոր համաձայնութեամբ։

ԱՐՇԱԼՈՅՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԵԳԻՊՏՈՍ
Տարեկան դրամ-ոսկի 30

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Տարեկան ֆրանկ 10

Բաժանորդք ՅԱՒԵԼՈՒԱԾ ներու փոխարէն վճարուած գին պիտի ըլլան։

Թէ՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ եւ թէ՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ նիւթական խնդրոց համար պէտք է դիմել Խմբագրութեան հասցեով թերթիս Մատակարարին, որ է՝

ԳԷՈՐԳ ՓԱՓԱԶԵԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇՈՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները ուղղակի պատասխանատու են իրենց գրածներուն

ՀԱՍՑԱՆ 20 ՓԱՐԱ ՈՂՋ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— Ռուսահայ բաժշկապետ Տօքթ. Բագարատ Նաւասարդեան մին է այն անկեղծ և համակրելի դէմքերէն, որոնք Ազգ. գործերու մէջ անսահման փորձառութիւն և հմտութիւն ամբարած են։

Օսմ. Սահմանադրութեան վերահաստատումէն յետոյ, մեծանուն բժշկապետը Մշակի մէջ կը հրատարակէ յոդուած մը, որ կարժէ արտատպումով մեր ընթերցողներուն ծանօթացնել։

Ներկայէս 16 տարիներ առաջ, յարդելի և հմուտ բժշկապետը հայութեան ընդհանրական գործերու ու ցաւերը չշոշափող և ծրագրական գեղեցիկ դիծեր պարունակող ընդարձակ և խիստ շահեկան դրութիւն մը ուղղած է յ'աքսորի հանգուցեալ հոգեւոր Տէր Ղեւոնդ Եպիսկոպոս Շիշմանեանի, որուն կարեւորութիւնը ի նկատի ունենալով հանգուցեալ Սրբազանը, իր «ԻՄ ԱՌՕՐԻ ԿԵԱՆՔԸ» երկին մէջ արտագրած էր զայն ամբողջութեամբը։

Մէկէն չա՛տ աւելի անդամներ հիացումով կարդացած եմ նոյն երկի ձեռագրին մէջ այդ ընտիր հայուն զգացումներն՝ որ համակ ազգասիրութիւն կը բուրէին, ու արդէօք պիտի դա՞յ օր մը՝ որ արժանի ըլլանք հրատարակուած տեսնել այն գանձարանը, որուն մէջ իր հոգին ու սիրտը դրած էր նաև մեծահռչակ բժշկապետը Բագարատ Նաւասարդեան։ Ե. Թ.

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Ասիական Թէմուրլենգի բիրտ բռնակալութեան մէջ եփված, բորբոսնած Թիւրքիան այսօր անակնկալ կերպով դարձաւ պարլամենտական պետութիւն։ Թող Եւրոպական քաղաքագէտները իրանց դդում գլուխներով մանուածապատ եւ ապարդիւն խորհուրդներ յղանան. նրանք եւ աշխարհագրական հարցեր ունեն, եւ ֆինանսական, մաքսային, կոնցեսիական եւայլն եւայլն, իսկ մենք հայերս չը մոռանանք մեր արեւները, մեր արախչինը, մեր մի կաթ սեւ հացը, հալալ զաւակը (որ հարամ չը լինի մեր գլխին)։ Ընտանեկան պատի սրբութիւնը, մեր արտը, մեր գոմը, մեր թոնիրը։ Սոցիալիզմի խնդիրները թողնենք քաղաքականապէս յղփացածներին —Գերմանիային, Անգլիային եւ այլ նըմաններին։

Իսկ մենք, մենք՝ հինգ հարիւր տարվայ թիւրքական ստրուկներս, ճորտերս փառք տանք Աստուծոյ, եթէ «սահմանադրական» Թիւրքիան մեր օձիքիցը ձեռք քաշի. նրա լաւը չուզեցինք, միայն թէ մեզ հանդիստ թողնի։

Սահմանադրութիւնը օգտաւէ՞տ է հային թէ ոչ։ Այս հարցի պատասխանն է՝ Աստուած գիտէ. բայց առ այժմ օգտաւէտութիւնը նրա մէջ է կայանում, որ հայի երկունքի ցնցաժամը անցաւ։

Ուզում եմ ասել՝ վանը, Մուշը արդէն սղմվել էին երկաթեայ օղերի մէջ եւ պէտք է պատռվէին. դրան կը հետեւէին Հայաստանի եւ այլ մասերը եւ կը կրկնվէր 1894-96 ի սեւ տարիքը, սակայն ցնցաժամը անցաւ։

Ամէն մի գործ ունի իր առաջին քայլը։

Արդ. սահմանադրութեան հանդէպ՝ ո՞րը պէտք է լինի հայի առաջին քայլը։ Առաջին քայլը պէտք է լինի յետագաղթ սկսել դէպի հայրենի օճախը եւ յետս տիրել քիւրդերից եւ այլ տարրերի կողմից ճողոպրած հողերը։

Երկար ու բարակ բացատրութիւնների կարիք չը կայ ըմբռնելու համար այս առաջին քայլի խորին կարեւորութիւնը. թիւը մեծ նշանակութիւն ունի մանաւանդ մեզի պէս մի վտիտ ազգի համար, իսկ առանց հողի, առանց հայրենիքի՝ ի՞նչ ազգութիւն։ Մեր անմիջական հարեւան ցեղերը, որոնք հնագոյն պատմութեան ընթացքում բաղդակից են եղել մեզ, որպիսիք են ասորեստանցիք, բաբելօնացիք, փիւնիկեցիք եւայլն... այսօր անհետ ջնջված են աշխարհի երեսից. բարեբաղդաբար հայերը դեռ ողջ առողջ ապրում են եւ այն՝ իրանց պատմական հայրենիքի հողի վրա։

Այո՛, թէին ես մեծ կարեւորութիւն եմ տալիս. եւ մուխը քթովս ելնում է, երբ մտաբերում եմ մեր վերջին եւ ամենամեծ կոտորածը, չը տեսնված երբէք, անգամ սպանդանոց Թիւրքիայի արիւնալի տարեգրութեանց մէջ եւ այն՝ ընդամենը 10–12 տարի առաջ. ա՜խ, եթէ եղած չ'լինէր այդ կոտորածը։

Այո՛. եթէ եղած չը լինէր, ոչ ոք ոչինչ չէր կորցնի, իսկ Հայաստանը ողջ առողջ պահած կը լինէր իր ծոցում Զերնազօրիայի ժողովրդի չափ մի ահագին ազգաբնակութիւն իր հազար չէն գիւղերում, որը այսօր մի ամիսի պատկառելի ուժ կը կազմէր։

Թւի աղէտը փոքր ի շատէ ամոքելու համար պէտք է հայրենիք վերադառնան ամբողջ երկրագնդի երեսը ցրված, զաղթած, փախած բոլոր հայերը։ Եթէ հրէաները բաբելօնեան գերութիւնից դարձեալ վերադարձան Պաղեստին ամբողջ 70 տարուց յետոյ եւ Եգիպտոսից կարծեմ 400 տարուց յետոյ, —մի՞թէ հայերը այնքան անսիրտ են, որ մի երկու տասնեակ տարվայ մէջ արդէն մոռացան իրանց պատմական հայրենիքը։

Մենք չենք խօսում, ի հարկէ, հին գաղթականութիւնների մասին, որպիսիք են, օրինակ՝ Բօրգարիայինը, Աւստրիայինը, — այլ նորերի մասին, եւ այդ ոչ միայն Կովկասի, Ռուսաստանի, կամ Պարսկաստանի, այլ եւ Եւրոպայի եւ գլխաւորապէս Ամերիկայի։

Այս վերջին գաղթականութիւնը անհրաժեշտաբար պէտք է վերադառնայ, միչեւ անգամ նրա այն մասը, որ ընդունել է ամերիկեան հպատակութիւն։ Դաղութներ մեզ պէտք չեն, մեզ համախմբում է պէտք՝ մի ամփոփ ազգային քաղաքականութիւն մշակելու համար։

Այս նպատակով ամենուրեք պէտք է հաստատվեն գաղթականական կոմիտէները, որպիսի գործի նախաձեռնութիւնը ամենավայելն է ստանձնել Թիւրքիայի հայոց ազգային ժողովին եւ նրա պատրիարքին, եւ այդ գործը պէտք է յարատեւի՝ մինչ գաղութները յարդարեն, վերջացնեն իրանց ձեռքի գործերը։ Մենք կը ցանկայինք, որ հայրենիք վերադառնային ոչ պակաս քան յիսուն հազար հոգի, որոնց չունեւորների ի հարկէ, հոգացողութիւնը պէտք է քաշվի թէ դուրսը, թէ ներսը՝ հայրենի երկրում եւ որի համար կը պահանջվեն մեծաքանակ գումարներ եւ կարող անձինք. մենք դոհ կը լինենք, եթէ այդ մեծ գործը ի կատար ածվի հինգ տարվայ միջոցում։

Մեր համեստ կարծիքով միապետութիւնը Թիւրքիայում դեռ շատ օրիններ ունի խաղալու իր քրիստոնեայ եւ մահմետական տարրերի գլխին։ Այսօր ծովը խաղավել է մրրիկներից մի հրաշալի մոգական գաւազանի շարժումից, բայց կատաղի ալիքները դեռ կը դան մռնչալու։ Չը մոռնանք, որ Թիւրքը մինչեւ անգամ արիական պարս չէ, եւ Թիւրքական միլիոնաւոր բիրտ հոգու եւ հոգեբանութեան տէր ժողովուրդը չի հանդուրժի բաժանել «սեվական երկրի եւ պետութեան» վայելքն ու բարիքը բայայի հետ։

Նոյն իսկ սահմանադրականների սիրած սկզբունքները, որոնք այնքան բաց չօվինիստական գոյներով արտայայտվեցին հէնց ազատութեան աւետման առաջին քայլերից, — բանաւոր տեղիք են տալիս ընդունելու, որ մօտիկ ապագայում նրանք եւս կ'ընդհարվեն չը համակերպվողների հետ։

Չեմ ուզում իմ վաղեմի տանջանքներս փաթաթեմ ուրիշների (ազգայիններից) վզին, որպէս զի տեղիք չը տամ անախորժ մտածողութեանց, ուստի կասեմ իմ անհատականս, որ, եւրոպական մեծ պետութեանց հետ, ես եւս իմ յոյս դրել էի, «հիւանդ մարդի» անբուժելի հիւանդութեան վրա, եւ ասեմ անցողապէս, որ այսօր էլ ես յոյս չեմ կտրում։ Հիւանդ մարդի հաշիւը պէտք է տեսնվէր արեւելեան հարցը վճռելու օրը։ Բայց այժմ, խորիմաստ մեծ պետութեանց շատ տասնեակ տարիներով փայփայված արեւելեան հարցի համեղ պատառի յոյսերը ի դերեւ եղան. նրանց ատամները. դեռ չը ճաշակած՝ առնվեցին։ Հիւանդ եւ ծեր քեռու վերջին բսպէի վրա յոյս դնող եւրոպացի երիտասարդները կոնֆիւզ կրեցին «Եւ ինչո՞ւ մենք այսքան երկար ժամանակ դանդաղեցինք։

(Մնացեալը յաջորդ թուով)

(ՄՇԱԿ) ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ

1.– Կազմութիւն. 2. Կազմական գործեր. 3.– Նպատակ. 4.– Արդիւնք. 5 – Ա. Բ. տեղեկագիրներ. 6.– Հակառակորդներ. 7.–Ընկերութեան անցեալը. 8.– Ներկան, 9.– Ապագան 10.– Հ. Բ. Ը. Միութիւնը ընդհանուր գծերով. 11.– Կանոնագիր։

Դ.

ԱՐԴԻՒՆՔ

Հ. Բ. Ը. Միութեան ինչպէս ըսուեցաւ՝ խիստ գործունէութեան նախախայրիքը, որ նախորդ թուով հրատարակուեցաւ, մէկ քանի կուսակցականներու գլխին պատյտ եւ մաբելիք պատճառած է. այնպէս որ՝ մինչեւ իսկ հանրագիր մը հրապարակ հանած են, կ'ըսուի, և կուզեն որ անպատճառ Վ. Պողոս բաշա զիլանի այդ հրաշագործ ոսկիները իրենց ձեռքը համբերլու. . . .։

Անդաղտնապահութիւն պիտի ըլլայ թէեւ՝ սակայն զիս ապահովողներ եղան թէ՝ բաշան հետեւեալ պատասխանները պիտի տայ եղեր հանրագիր պատրաստող «ազգայիններ»ներուն։

«Պարոնե՛ր.— Մենք ձեզմէ լաւ գիտենք Հայաստանի ցաւերը և անոր համար մեր սիրտը կը հատցնենք ու ընդարձակ ժամանակ յատկացուցած ենք։

«Դուք գիտէք որ՝ մեր կանոնագիրը վարչական ժողովին մասնակցելու համար նոյն իսկ երաշխաւորութեան գումարներ սահմանած է

(տե՛ս կանոնագիր 8օդուած 11.) դուք ալ հանրագիր ստորագրողներդ՝ եթէ զոհողութիւններ ընելու տրամադիր է՛ք և պատրաստ, իւրաքանչիւրդ 50 ական ոսկի դնէ մէջտեղ դնելով կլորիկ գումար մը գոյացուցէ՛ք –հոգէ՛ էթէ 4–5000 ոսկի չըլլայ այն – ու յետոյ եկէ՛ք մեզի հետ բանակցութեան մտնելու և օգտակար առաջարկներ ներկայացնելու։ Ա. ռանց ասոր Ձեր հանրագիրը և ձեր խօսքերը պօղ շաքարու կարգը պիտի դասուին ապահովապէս, և դուք ո՛և է կերպով ձեր նպատակին չ՛պիտի կրնա՛ք հասնիլ։»

«Մենք շատ անգամ փորձած և լաւ հասկցած ենք թէ՝ Ձեր այդ շարժումները Հայաստանի խեղճերուն վրայ ունեցած անկեղծ հոգածութենէ մը չի՛ բղխիր, այլ՝ դուք կուզէ՛ք որ թերթերուն մէջ ձեր վրայ խօսուի, ձեր անունները իբրև ազգասէրներ!!! ոեգլամ ըլլան, ու օր մը՝ բարի օր մը՝ զոր ես չարագուշակ անուանելու չեմ քաշուիր, անկիւնէ մը ձեզի կա՛մ ազգային երեսփոխան և կամ Օսմանեան Բաղդատեանին անդամ ընտրեն, ու աւելին՝ թեռիւս Կաթողիկոսական պարգամաւոր...։

«Ահա՛ ձեր սեւեռուն նպատակը։ Հիմայ գնացէ՛ք Ձեր գործերուն մի՛այն խառնուեցէ՛ք, և թողէ՛ք որ Հայաստանի վրայ մենք ալ մտածենք։»

«Եթէ բան մը կայ, որ «հանրագրեցի» ներուդ խելքը չհասնիր, այն ալ հայաստանի իրական վիճակն է։»

«Երթա՛յք բարեաւ ուրեմն...»

Այս հաւանական պատասխանը ստանալէ յետոյ մեր խելօք «ազգայինեի»ները դլխիկոր և քիթերնին կախած պիտի մեկնին, ու նորօրինակ ռէգլամներու վրայ պիտի մտածեն...։

Ես թողլով որ իրերը իրենց բնական ընթացքին մէջ լուծումի մը յանգին, կը վերադառնամ ամբողջացնելու– նախորդ թուոյ սկսած հաշուական գործերս։

Հ. Բ. Ը. Միութիւնը՝ ինչպէս տեսանք՝ իր անդրանիկ մէկ մեսրովը 6609 եգիպտական ոսկի ձեռք բերած էր։ Այս թիւերը Ա. տարւոյ տեղեկագրէն կը քաղէինք, հիմայ մեր քննութիւնները շարունակենք Բ. տարւոյն համար, միշտ ի նկատի ունենալով արդիւնքը։

Հ. Բ. Ը. Միութիւնը Բ. տարւոյ ընթացքին Գահիրէի մէջ ունեցած է 438 անդամ, նախորդ տարիէն 20 աւելի։ Այս թիւը շատ անբաւական է, բայց պատճառներ ալ կան, զորս պէտք չէ նկատողութենէ վրիպեցնել։ Հ. Բ. Ը. Միութեան օգուտը կը պահանջէ որ առտնց մասին վերապահում չ՛ըլլանք։ Անցեալ օրեր անձամբ հանդիպեցայ որ ընկերութեան հաւաքիչը անդամէ մը դանձում պիտի ընէր և շատ անխնամ վերաբերում մը ցոյց տուաւ. ա՛յնպէս որ՝ ինքզինքս պահ մը դաւառներու հին ոեժիմին պատկանող ոստիկանի մը հանդէպ գտնուած ըլլալ կարծեցի։ Հաւատացէ՛ք որ՝ եթէ առնիս կամ կարասիները արդէն ծախուած չըլլային՝ թեռնիրէ մը կամ թաւա մը պիտի հանէի ու այդ հարկահանին ձեռքը տայի որ տանէր ծախէր ու ընկերութեան պահանջը գանձեր։ Արդեօք՝ ուրիշ տեղեր ալ միևնոյն խստութիւնները ի գործ չե՞ն դրուիր, ու ասիկայ պատճառներէն մէկը չէ՞ կարելի համարել որ Հ. Բ. Ը. Միութեան անդամները հետզհետէ քաշուին։ Բարեբաղդաբար՝ այսպէս ըլլալով հանդերձ՝ 20 հոգի ալ նոր արձանագրուողներ եղած են Գահիրէի մէջ։

Աղէքսանդրիոյ անդամոց թիւը նախորդ շրջանէն զգալի նուազում մը կրած է։

Ա. շրջանին մէջ Աղէքսանդրիա տուած է 282 անդամ. այս տարի 175 ի իջած է այդ թիւը. այսինքն 107 անդամ պակաս է։

Այս պակասողներուն համար ըսողներ կան թէ՝ մէկ քանիները «Միացեալին» բաժանորդագրութեան հրաւէր ստացած էին, մէկ քանիներ Փուատ բաշայի պատուոյ սուրին անդամակցած են, իսկ Մնացեալներն ալ սիրելի բարեկամիս Տ. Լ. Մ. ի ապագայ ծրագիրներու մէջ պիտի դրծածուին, և առ այդ կաղ՛ ու պատրաստ կ՛սպասեն...։

Թանթաի անդամներէն չորս հատ միայն պակսած են երկրորդ շրջանի մէջ, հետևաբար ասոնց թիւն է 24։

Զակազիկի անդամոց թիւը նախորդ շրջանին 28 էր, որոնցմէ 7ը պակսած են, տեղափոխութեան պատճառաւ։

Իպրահիմիյէ Ճարգիյէ՝ մէկ անդամ պակաս ունի նախորդ շրջանէն։

Ասխութ՝նոյնպէս։ Ֆէյումի անդամոց թիւը Ա. շրջանին 8ը եղած է. իսկ երկրորդ շրջանին 19ի բարձրացած է։

Լէնէ՝ երկրորդ շրջանին 5 նոր անդամներ արձանագրուած են, որոնք նախորդ շրջանի մէջ չ՛կային։

Ասուան՝ նոյնպէս երեք նոր անդամներ արձնագրուած են։

Սուսան՝ (Օմտուրման) 18 նոր անդամներ տուած է ընկերութեան։

Խարթում՝ 2 նոր անդամ։

Հալֆա՝ 3 » »

Աֆթարա՝ 1 » »

Եգիպտոսի զանազան տեղերէն այսինքն, Ֆակուս, Մանսուրա, Վասթա, Միթ-կամր 5 նոր անդամներ տուած են։

Բարիզ՝ երկու նոր անդամներ ունեցած է։ Կոմսուհի Եւա Տ'Արշոտ (Ծնեալ Նուպար և Տիար Աֆանիկ Էդնեան։

Մարսէյլ՝ 20 նոր անդամներ տուած է ընկերութեան։

Մանչէսթրի նոր անդամը, Եղբարք Պաղրճեան։

Սքարպորօ (Անգլիա) 1 նոր անդամ։

Վիէննա՝ 2 անդամի պակաս ունի նախորդ շրջանէն։

Պուրսվինա՝ 1 նոր անդամ.

Ֆիլիպէ՝ նոյնպէս.

Նիկոսիա, Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն։

Ճիպութի՝ նախորդ շրջանէն 1 անդամ պակաս ունի։

Հապէշիստան՝ նոյնպէս 1 պակաս։

Ոնկարաճա պալի (Հոլանտական արևելեան Հնկաստան) նախորդ շրջանէն 1 անդամ աւելի։

Երկրորդ շրջանի անդամոց ընդհանուր թիւն է 786 նախորդ տարիէն 29 պակաս միայն, հակառակ որ Աղէքսանդրիայէն 107 անդամներ միանուագ պակսած էին։

Սոյն շրջանի մէջ ընկերութեան մնացուկը մտած գումարն է մինչ 1908 Մայիս 1.

մտից տուրքերէն 1666 ոսկի եգ

Ամսավճարներեն 1187 » »

Նուէրներէ 374 » »

Կարոններէ 271 » »

Ընդհ. գումար 3498, զոր նախորդ շրջանի մնացորդին վրայ բարդելով կունենանք 10,107 եգ. ոսկւոյ խառն հասոյթ մը։

Յաջորդ թուոյ ծանօթութիւն պրպտեցանք այս գումարէն Հայաստանի զանազան կողմերը դրկուածներուն նկատմամբ։

Ե. ՔՈՐՈՍԵԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՀՈՒՆ

Խե՛ղճ Թուրքիա...

Բռնակալութեան անպիտան լուծը տարիներով իր յոգնած, իր ուժասպառ ու մարտիրոսացած վզին վրայ քաշկռտելէն յետոյ՝ երբ աղատութեան արշալոյսը վերջապէս կը պարզուէր իր առաջ, ու ինք կոչուած էր պահ մը լիուլի վայելելու այս աղատութիւնը որ այնքա՛ն պերմարդկային զոհողութիւններով ձեռք բերած էր, հաղիւ շունչ առած ու դեռ իր ցնծութեան պոռթկումներովը զինով, անողորմ դիպուածներ կը կասեցնեն իր գեղեցիկ վաղը դէպի յառա՛ջ, ու խե՛ղճ Թուրքիան է որ անդամ մ'եւս դէմ առդէմ կը գտնուի նոր նոր զժուարութիւններու։

Օրը փոթորիկներով լի է իրեն համար։ Զարագուշակ բաներ մը կեռեւան օդին մէջ։ Խաղաղութեան ծրագրին հետ հորիզոնը ծածկուած է, տեղ տեղ, թանձր մառախուղներով։ Ամբողջ Պալքանը եռուզեռումի մէջ է. Պուլկարիա անկախ կը հռչակէ ինքզինքը. Կրետէ Մայր–Յունաստանին միանալ կուզէ, Մակեդոնիան ալ դժգոհ, և տարակոյս չի կայ որ ասոնց անկախութեան ձգտումները իրենց արձագանգները պիտի ունենան ուրիշ ազգութիւններու քով ալ։

Այս ձգտումները բնականաբար պիտի նշանակեն Թուրքիոյ տկարացումը, քայքայումը կամ բաժանումը՝ եթէ զանոնք կասեցնող բարերար ձեռք մը չի գտնուի։

Պիտի մաղթէինք որ այս ամեն կնճռոտութիւններէն սահմանադրական եւ ազատասէր Թուրքիան յաղթական ելլէր, որովհետեւ արդարասէր ու զօրաւոր Թուրքիա մը՝ մեզի համար՝ շատ աւելի նպատաւոր է քան թէ եսասէր ու միայն իրենց շահը փնտռող Եւրոպացիներու տիրապետութիւնը։ Անցեալին զատն փորձառութիւնը մեր առջեւն է։ Անշուշտ պիտի ուզէինք որ Հայն ալ անկախ ըլլար, բայց որովհետեւ Հայաստանը ոչ Պուլկարիա է եւ ո՛չ Մակեդոնիա, մեզի կը մնայ դեռ ըլլալ աղատական ըէժիմով մը, մինչեւ այն օրը որ մեր բարեացակամ աբրամադրութիւններէն եւ կենալու անբաղձալի հարկին մէջ չի գտնուինք. իսկ թէ պատերազմի մը պահուն ինչպէս պէտք է վերաբերուի հայը, փափուկ խնդիր մ'է այս՝ որուն լուծումին օրուան պատահականութիւններն են որ մեզի կրնան լաւագոյն առաջնորդները ըլլալ։

Եւ այս հարեւանցի խորհրդածութիւններուն հետ թերեւս չհեկանուիթէ զուրկ չըլլայ հայ ընթերցողին ներկայացնելով այն հայրենաշունչ կոչը զոր Ցուատ Միտհադ բաշա կուղղէ առ հասարակ բոլոր Օսմանցիներուն, տեղւոյն «ԻԷժիբթ» թերթին անգլիերէն բաժնին մէջ։

—Հայրենասէրնե՛ր, եղբայրներ, եւ հայրենակիցներ, այսօր ատենն է որ ամեն ճշմարիտ Օսմանցի ցոյց տայ թէ ի՞նչ է ինք (to prove his worth)։ Հիմա ժամանակն է որ իրր ճշմարիտ օսմանցիներ դիմանք պաշտպանել մեր Օգոստափառ Կայսրութիւնը իր սահմանադրական ձեւին տակ։ Մեր սիրելի հայրենիքը պարաք կը դնէ ձեր վրայ որ յաղթականօրէն արիւնոտիպ թափէք պատերազմի պահուն. մաղթենք սակայն որ այդ բաղխումը տեղի չունենայ։

—Հայեր, Յոյներ, Սուրիացիք, Հրեաներ եւ Քրիստոնեանե՛ր, հիմա օրը է որ ինքզինքդդ ցոյց տաք իրր սահմանադրական Թուրքիոյ ճշմարիտ զաւակները։

—Ինչո՞ւ համար քրիստոնեայ կամաւոր զինուորներու գունդ մ'ալ չունենանք. ինչո՞ւ համար Սուրիացիք, Հրեաները, Հայերը եւ Յոյները կամաւորներ չի հանեն ու փառապակներ չի շահին Օսմանեան տարեգրութեանց մէջ, եւ այսպէս ընելով՝ արեան գնով իրենց իրաւունքները շահած ըլլան կայսրութեան մէջ։ Այսպէսով ոչ ոք չ'պիտի կրնայ ուրանալ դիրք կամ արտաղոներ ունենալու իրաւունքը։

Մենք չենք որ յարձակում գործեցինք Պուլկարիոյ, մենք թշնամութիւններ չսանձեցինք. խաղաղութիւնը մեր ուղեցոյցն է մեր ներքին խնդիրները կարգադրելու համար։ Բայց Պուլկարիա մեզի ոտքի հանեց, եւ մենք պէ՞տք է որ հիմայ վախկոտ ըլլանք ու թողուանք որ անիկա յարձակում գործէ մեր վրայ առանց մենք մեզ պաշտպանելու։

—Եթէ, Աստուած մի՛ արասցէ, պատերազմ ծագի եւ մենք հոգւով եւ մարմնով միացած չըլլանք, մեր սիրեցեալ սահմանադրութիւնը իր բնական մահովը պիտի մեռնի եւ մի գուցէ այն ատեն կացութիւնը իր նախկին վիճակին դառնայ։

—Ցաւանք որ պատերազմը անխուսափելի չըլլայ, բայց մենք պէտք է որ պատրաստ գտնուինք ամեն պատահականութեանց առջեւ՝ երբ մեր ազգական կառավարութիւնը պարտաւոր զգայ ինքզինքը եւ իր պատիւը պաշտպանելու։

—Մեզի կը մնայ, այդ պարագային, թեւ թիկունք ըլլալ անոր։

Ս.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ՏՆՕՐԷՆ

Գալուստեան Ազգային Երկսեռ Վարժարանաց Պատ. Հոգաբարձութիւնը Տնօրէնի պաշտօնին կոչած է Տ. Անդրանիկ Կարապետեանը։

Տ. Կարապետեան իր նախնական դաստիարակութիւնը Արաբկիրի մէջ ստացաւ յետոյ, Պոլսոյ Կեդրոնական վարժարանը յաճախած և շրջանաւարտ եղած է անկէ։

Ամերիկայի Լօվէլի Պետական վարժապետանոցէն ալ իր վկայականը առնելով՝ Բարիզ վերադարձած և Սորպոնի մանկավարժական դասընթացքներուն հետեւած է։

Այժմ Պօսթոնէն հեռագրաւ ծանուցած է Պատ. Հոգաբարձութեան թէ՝ մեկնած է անտի Եգիպտոս գալով իր նոր պաշտօնին գլուխը անցնելու համար։

Կար և յաջողութիւն կը մաղթենք իրեն։

ԾԱՂԿԵԼԻՈՒԹԻՒՆ

Տարույս Օգոստ. ամսուն մէջ Ազգ. վարժարանաց հոգաբարձութենէն յայտարարութիւն մը ստացած էինք հրատարակուելու խնդրանօք։

Մեր պարտքը կատարեցինք։ Նիւթը պիտի հարցնէք։ Գալատեան Ազգ. վարժարանաց համար, ըստ որոշման Պատկ. Երեսփոխան Ժողովոյ, կարող ծնողքներէ տարեմուտ մը ստանալու կը վերաբերէր։

Լսածիս նայելով, ծնողքներէ շատեր՝ համակերպելով Երեսփ. Ժողովոյ որոշման, և պատասխանելով հոգաբարձութեան հրապարակային հրաւէրին, ըստ կարի՝ իրենց վճարումներն ալ ըրած են եղեր։

Բիչ յետոյ՝ չենք գիտեր ինչ անցած դարձած է որ՝ Պատ. Քաղաքական Ժողովը Պատկ. Երեսփ. Ժողովոյն որոշումը տեղւոյն վրայ արգելել ուղած է եղեր. ու այդ բոլոր յայտարարութիւններէն ու աղմուկներէն յետոյ, Պատ. Հոգաբարձութիւնը հարկ դատած է ծնողքներէն ստացած դրամը ետ դարձուցանել։

Անցեալ օրեր մէկ երկու տեղական հայ թերթերու մէջ Դեր. Առաջնորդը պաշտօնական ոգի մը հրատարակելով վերոտին կոչ կընէր ծնողքներուն, որպէսզի Հոգաբարձութենէն իրենց ետ ստացած դրամը ետ դարձուցանեն...։

ՊՕՂՈՍ ԲԱՇԱ

Տեղական թերթերէ տեսնք Հոկտեմբեր 2 թուականաւ Ն. Վ. Պօղոս բաշայի ստորագրութիւնը կրող նամակ մը հրատարակեցին, որը ուղղուած է եղեր Էնվէր և Նիազի յաձանաւերուն պատրաստութեանը համար կազմուած հանգանակիչ Մասնախմբին։

Ն. վսեմութիւնը քաջ համոզուած ըլլալու է գործին կարևորութեան և գործիչներուն վստահելիութիւն, որ խանդավառ սոճով մը զբրած է իր նամակը, և հետևեալն է։

«Շատ գոհ ուած իմ այն մտածման համար որ Ձեզ առաջնորդած է զիս հրաւիրել մասնակցելու համար հագանակութեան գործիքէն, որ նպատակ ունի երկու յաձանաւերուն շինութիւնը, որոնք պիտի կրեն Նիազի և Էնվեր հայրենասէրներու անունները։»

«Ոչ ոք ինձի չափ հիացած է կայսրութեան վերածնունդի գործին՝ որ առաջ կը տարուի աննման իմաստութեամբ մը սահմանադրութեան վերահաստատումի նախաձեռնարկներու կողմէ, որ արդարութեան և ազատութեան նոր թուական մը բացին Օսմանեան բոլոր հպատակներուն համար։»

«Ուստի սիրայօժար կընդունիմ Ձեր հրաւէրը, և երջանիկ պիտի համարեմ ինքզինքս, հաճեստ մասնակցութիւն մը բերելով այս հայրենասիրական հանգանակութեան։»

Հաճեցէք ընդունիլ հայրն

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊԱԿԻ

Ազն. Սեդրաք էֆ. Դաւիթեան 200 դահ. ողջ նուիրած է Արթակերի սովելոց, իսկ Մեծ. Տիար Առաքել Պէրպէրեան 50 դահ. ողջ նուիրած է Ակնայ սովելոց, հանգուցեալ Տ. ԽԱՉԻԿ ՊԷՐՊԷՐԵԱՆԻ քառասնօրեայի հոգեհանգստեան արարողութեանց առթիւ։

ԱՌՈՒԵԼԻ ԱՐԿԱԾ

Պոլսոյ և Իզմիրի թերթերը ահռելի արկածի մը լուրը կը բերեն մեզի, որուն վրայ անկարելի է ի խորաց սրտէ չ'ցաւիլ և չ'յուզուիլ։

Անցեալ շաբթու Իզմիրի նաւահանգիստին մէջ Քօրտէլիօ գացող Տիրքէթի շոգենաւներէն սբանկուղ, Սելանիկէն եկող Քէսէնտէրէ շոգենաւին հետ ընդհարում մը կունենայ և Սբանկուղի մէջ գտնուող ճամբորդները թուով 155 հոգի կը խեղդուին։

Ասոնց մէջ 16 հայեր կան եղեր որոնցմէ ոմանք դեռ երիտասարդ, ոմանք ալ ընտանիքի և զաւակաց տէր հայրեր են։

Տեղւոյն յոյները յուզուած ապէտալի պատահարին պատճառաւ, որ Բ. Նաւապետին մէկ սխալէն առաջացած է, Քօրտէլիօի նաւամատոյցները այրած են և ժողովուրդին յուզումը հանդարտեցնելու համար զինուորական միջոցներ ձեռք առնելու պէտքը տեսնուած է։

Մոտամոյն եղողներու անուններն են, Գառնիկ Հալէպեան, Բարունակ Աւթունեան, Լեւոն Երամեան Գրիգոր Սիւրիւճեան, Կարապետ Ցաբէթեան, Յովհաննէս Ունճեան, Հայթաեան, Օնան Մկրտիչեան, Նաղարէթ Զամպաքեան, Ստեփան Աւագեան, Ստեփան Սանտալճեան Արմենակ Նէմցէ և ուրիշներ՝ որոնք տակաւին անցայտ կը մնան։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐՈՒՆ

Պատրիարքական տեղապահ բարձրաշնորհ Տ. Եղիշէ Եպիսկոպոս Դուրեան Եգիպտոսի առաջնորդին նամակ մը ուղղելով 20,000 ղրշի նուիրատուս ղրկած է, որպէսզի տեղւոյս աղգայնոց դիմում ընելով սպառէ և գոյացած արդիւնքը ընդ փոյթ պատրիարքարան հասցնէ Հայաստանի սովատանջ մեր եղբայրներուն օգնութեան հասնելու համար։

Տիար Տելեմաք Բարթողեան այս նպատակին յատկացուելու համար երկու հարիւր ղուրուշ յանձնած է «Արշալոյս»ի խմբագրութեան։ Կը խնդրուի Դեր. Առաջնորդէն որ պէտք եղած ստացականը կամ նուիրատուները ղրկելով գանձէ ծանուցեալ գումարը։

ՍԽԱԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՄԸ

«ՄԱՆՉՈՒՄԻ» կը գրէ թէ՝ «Եգիպտոսի Հ. Բ. Ը. Միութեան Վերջին նիստին մէջ առաջարկուեցաւ 4 – 5 000 ոսկւոյ գումար մը ժամ առաջ հասցնել Հայաստան, քանի որ այս գումարը կարելի պիտի ըլլայ ձեռք բերել պահեստի դրամագլուխէն և հատուցանել անդամավճարներու տարեկան մուտքովը որ այսօր կը հասնի 1200 ոսկիի ու որուն մէկ վեցերորդը 200 ոսկին յատկացուի պահեստի դրամագլխին մնացեալ 1000 ոսկին ալ տարուէ տարի յատկացուի փոխ տրուած նպաստին։»

Ի՞նչ գեղակազմ հաշիւ, որ դեղեցիկ երազի մը առջև քար կը հանէ։

Հայաստանցիներուն սիրտը մէկէն ի մէկ վեր վեր չ'հանելու և զանոնք պարապ յոյսերով չ'օրօրելու համար փութանք ինձիշատակս հետևեալ սրբագրութիւնը կատարել այդ լուրին վրայ, որ՝ կամ մեր յարգելի պաշտօնակցին սխալ հաղորդուած է, կամ Ազգային լրոց բաժնեն խմբագիրը սխալ ըմբռնած է։ Ուստի շահեկանութենէ զուրկ չ'պիտի ըլլայ, եթէ մեր սիրելի հայաստանցիները նկատողութեան առնեն հետևեալ պարագաները։

Նախ՝ Հ. Բ. Ը. Միութեան Վերջին նիստ մը տեղի ունեցած չէ, որովհետև վարչութեան անդամաց մեծագոյն մասը բացակայ է։

Երկրորդ՝ նիստ մը գումարուած է թէև՝ բայց քանի մը կուսակցականներու կողմէն, է որոնք «գործի վրայ երևալու» ու եթէ կարելի է՝ «անուն մը շինելու» մտադրեցին մղուած հրապարակը աղմկելու հետամտութիւն մը ունեցած են և ունին։

Երրորդ՝, այդ ժողովը գումարող և 4 – 5000 ոսկի անմիջապէս Հայաստան հասցնողներէն շատերը մինչև ցարդ բան մը վճարած չեն Միութեան. հետևաբար իրենց պոշ շամբերը փորի խոստուկ պատճառելէ զատ ուրիշ բանի չեն կրնար ծառայել։

Չորրորդ՝ Հ. Բ. Ը. Միութեան պահեստի գումարները որ դարձեալ Հայաստանին կը պատկանի, իրենց յատուկ տեղերը ունին, որուն ծանօթ չեն աղմկայոյզ խմբակին հաւատորները։

Հինգերորդ թուղթին վրայ կամ օդին մէջ ներկայացուած այդ հաշիւները իրական ըլլալէ բաւական հեռի և Դրական կոչուելու անարժան են։

Այսչափը գիտնալէ յետոյ՝ կը մնայ հարցնել թէ՝ ինչո՞ւ արդեօք այդ խմբակին պատկանող մէկ քանիներ հոս ու հոն կը յայտարարեն եղեր թէ եթէ առաջարկեալ գումարը չ'ղրկուի՝ իրենք պիտի չանան քայքայելու ընկերութիւնը։ Բայց կը կարծենք թէ՝ այդպիսի ապառնական միջոցներով ո՛չ իրենք Հայաստանին օգտակար կրնան ըլլալ, և ո՛չ ալ կրնան ընկերութեան վնասել։ Իսկ եթէ կը կարենն այդպէսով մէկուն միւսին վախ պատճառել, այդ դարը անցած է հիմայ և ոչ ոք իրենց կարևորութիւն պիտի տայ, ասոր ապահովենք։

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՎՐԷԺԱՌՈՒ ՈՃԻՐ

Երկու շաբթի օրը Շարա-Ապտ-էլ Ազիզի թատրոնէն դուրս ելլելու ատեն, ժամագոյ Ֆիշէր անունով Ռուս մը՝ Տէր և Տիկին Լեոն և Օլկա Մարքովիչը դաշնահարած է։ Հոն եղող բազմութիւնը և նոյն իսկ ոստիկաններ ժամանակ չեն ունեցած միջամտելով ազատելու երկու ոճրի առարկաները։

Վրէժառուն տեսնելով իր զոհերը գետին փռուած, են Մուսքիի քրագօլը կերթայ ոճիրը խոստովանելու, և յետ հարցաքննութեան, Հիւպատոսարանին կը յանձնուի։ Պատճառը վրէժառութիւնն է եղեր։

Մարքովիչ զոյգը՝ որ ծանօթ է եղեր իբրև կատատաբարոյ, Պ. Ֆիշէրի անչափահաս քոյրը՝ Եսթեր անունով, ծուղակը ձգելով տեղացի Պէյի մը հետ մեղապարտ յարաբերութեան մէջ կը դնէ...։

Եղբայրը գործին կը տեղեկանայ և անոնց կատատաբարոյութեան արժանի պատիժը իր իսկ ձեռքովը կուտայ, քանի մը տեղերէ մահացու կերպով ծակծկելով վատաբարոյ զոյգը։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ.– Պոլիս Ս... Ձեր տրուած հասցէին նամակ ունիք։

ՍԵՂԱՆԱՒՈՐԱԿԱՆ ՏՈՒՆ

—o—

Մուսմի փողոց թիւ 6, Սինկըրի մատանաճիւղին քով, Ժիւսթէրի դիմաց.

Կը գտնէ եւ կը ծախէ հրապարակի վրայ շրջաբերող բոլոր կարեւոր արժեթղթերը, մասնաւորաբար Քրէտի Ֆոնսիէի հին եւ նոր, Ռումէլիի երկաթուղեաց եւ Բանամայի ֆրանսական վաւերացնալ արժեթղթերը, որոնց սկզբէն ց'այսօր շահող թիւերուն ցուցակներն ալ ունի։

Արժեթղթերու արդի խիստ նպաստաւոր գներէն կրնան օգտուիլ Եգիպտացնակ մեր ազգայինները մեզի դիմելով։

Մասնավճարներով – 25. 50, 100– կարելի է արժէթղթերու տիրանալ, եւ մատչելի պայմաններով՝ աւանդի փոխարէն՝ փոխառութիւններ կնքել։

Սեղանաւորական ամէն տեսակ գործառնութեանց, եւ առեւտրական ամէն կարգի Պանքներ զեղջելու պատրաստակամութիւն։

Սեղանաւորական եւ Պօրսայի գործառնութիւններ եւ ա՛յլ կարգի գործերու վերաբերեալ գաւառներէն եղած հանձնարարութիւններ փութով կը կատարուին։

Ռումէլիի երկաթուղւոյ վիճակահանութեանց պանգ Օթոմանէն երաշխաւորեալ եւ վաւերացեալ բրօմ հաներ գնել ուզողներուն համար՝ լաւ պատեհութիւն մ'է մեզի դիմելը, որովհետեւ պանգ Օթոմանէն ուղղակի կատանանք յիշեալ բրոմհանները։ 12–50

ԱՐՄԵՆԱԿ ԹԱՇՃԵԱՆ

ՎԱՐԴ ԵՒ ԶԱՐԴ



ՅԻՍԻՆ ԼՈՒՍԻԷ Պ. ՉՕԼԱՔՈՅԻ

ՄՈՒՍՔԻ ՇԱՐԱ ՄԻԻԶԷՅԻՆ

ԼԱՏԻՆԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՃԻՇՏ ԴԻՄԱՑԸ

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԾԱՂԻԿՆԵՐՈՒ

ԿՓԷԼՓՅԷ

Հարսանեկան գեղակազմ պուգետներու, շքեղ ծաղկեկողովներու, պսակներու եւ բեղոյրի (չափղա) հրաշագեղ ծաղիկներ ունենալու համար մի դիմէք այլուր։

Մեր գիները գիւրամատչելի են եւ ապրանքները անմրցելի։

Փորձի համար անդամ մը այցելողը, ապահովապէս մեր մնայուն յաճախորդը պիտի ըլլայ։

Մեր տարիներու փորձառութիւնը այսպէս ըսել կուտայ մեզի։

31–43 ՏԻԿ. Լ. Պ. ՉՕԼԱՔՈՅ

ՀԱՊԷՇԻ ՆՈՐ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Մենելիքի մահուան բերմամբ կացութիւնը խիստ վրդովեցուցիչ դարձած է Հապէշի մէջ։

Ատիս Ապապաէն. ֆրանսական թերթի մը գրուած է հետևեալը։

«Ամեն բանի կ'սպասուի՝ տրրուած ըլլալով բնիկներու թաղնել, կողոպտել և կոտորելու ձգտումը։

Տեղւոյս ֆրանսական ներկայացուցիչը երբ իմացաւ Մենելիքի մա-

ԵՂԻՇԷ ՓԱՄՊՈՒՔՃԵԱՆ

ՇԱՐԼ ԱՊՏ ԷԼ. ԱԶԻԶ ԴԱՐԱԳՕԼԻՆ ԴԻՄԱՑ

Միակ ներկայացուցիչն է Ազգային Հիւանդանոցի Սիկարի թղթերուն, կը վաճառէ մեծաքանակ և փոքրաքանակ։

1909 տարւոյ պատի և դրպանի օրացոյցները գնելու համար միայն մեր վաճառատունը դիմելու է, և կամ գիւրութեան համար Արշալոյսի Տպարանը։

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԽԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿՀ – ԷԼ – ՊԻՐՔԷ ՓՈՂՈՑ ԷՕԶՊԷՔԻՅԷ

ՄԵՓԱԿԱՆԱՏԷՐՔ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂԲԱՐՔ

ՅԱՏԿԱՆԻՇԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է։

Արեւելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի ոճան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը։

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկառներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամանակ ընելու. բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին։

Պարսկական ամենաընտիր թէմպէքիի այլ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գտնելը պարզապէս սխալիլ է։

Մեր վաճառատունը վերջապէս, գիներու ոճանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մանաւանդ գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անոխտելի ապացոյցներէն մին ալ զարդացած եւրոպացիներէ օրըստ օրէ մեծ քանակութեամբ և սուաբ թուով եղած յանձնարարութիւններն են։

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂԲԱՐՔ

հը, իր շուրջը հաւաքեց բոլոր միւս հիւպատոսները՝ ո՛ և է պատահականութեանց առջև լուրջ միջոցներ ձեռք առնելու համար։

Խելացի նախատեսութեամբ մը Պ. Լակարտ այնպէս մը կարգադրած էր որ խել մը պահեստի պաշար ամբարած էր հին հիւպատոսարանին մէջ։ Այս պաշարը մեզի կրնայ բանի մը ծառայել խառնակութիւններու պահուն, որովհետև մեր ներկայացուցչին քովն է որ ամենքս ալ պիտի ապաստանինք ուղելով չ'ուզելով։

Անցեալ Յունիս 23ին Մենելիք իրեն յաջորդ ընտրած էր իր կրտսեր որդին, Լիճ Եասու, 13 տարեկան պատանի մը. բայց ինչի՞ կրնայ ծառայել իր դեռատի աղդեցութիւնը 12 միլիոն թալնող, կողոպտող, զինեալ և ապստամբ ժողովուրդներուն դէմ։

— Ցուսանք որ իրաց վիճակը քիչ մըն ալ շարունակէ խաղաղ մընալ՝ մեր շահերը պաշտպանելու միջոցը ունենալու համար. պիտի յաջողինք միայն . . . . »

Մենք ալ մաղթենք մեր կողմէն որ խաղաղութիւնը անվկանդ ծայ հոն, դէթ մեր եթովպական փոքրիկ հայ գաղութին համար։

ԱՐԾԻՒ

Աղգային, Գրական, Քաղաքական կիսամսեայ հանդէս, որ կը հրատարակուի ամէն ամսոյ 1 ին և 16 ին։ Տարեկան բաժնեգինն է արտասահմանի համար 7 ֆրանք, վեցամսեայն՝ 4 ֆրանք բացարձակապէս կանխիկ։

«ԱՐԾԻՒ»ը Ամերիկայի ամենէն անկախ անաչառ և անվախ հանդէսն է, որուն խմբագիրը, միս Մինակ, կրցաւ արտասահմանական յեղափոխաբուծներ և դրամաշորթներ քաղամերկել ու չախչախել։

«ԱՐԾԻՒ»ը շարունակ կը հրատարակէ գեղեցիկ բանաստեղծութիւններ, ու Եւրոպական գրականութենէն հայկապնորաձէպեր։ Իր թիւ ժ. էն սկսեալ կը թարգմանէ «Եոթեր» անունով հայկական վէպ մը, որ 1901 ին լոյս տեսած է Անգղիոյ մէջ։ Հեղինակը, Վարդենի կեղծանունով, մօրը կողմէն անգլուհի, հօրը կողմէն հայուհի մը, ականատես եղած է 1896 ի կոտորած ին զոր նը-

կարագրել կը ջանայ անոր ամբողջ արտակեղեքութեամբը։ Վէպին հերոսը անհատ մը՝ կամ ժողովուրդ մը չէ, այլ Սուլթանին արիւնապետութեան Կարմիր Արհաւիրքը։

«ԱՐԾԻՒ»ի բաժանորդագրուիլ ուզողներ թող դիմեն խմբագրութեան կամ ուղղակի իր հասցէին։

Editor of ARDZIV
P·O·Box 2285 Boston – Mass.

Ց. Դ. Ապառիկ ապսպրանքներ սեղադրութեան չեն առնուիր։

ԾԱԽՈՒ ԴԻՐՔԵՐ

—o—

«Արշալոյս»ի տպարանին մէջ, Շէրիֆ բաշայի պարտէզին դիմաց՝ կը վաճառուին հետեւեալ պրոշիւրները։

Ա. ՊԱԼԵԱՆ

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Թիւ 1 Թրքուհին 50 սանթիմ
« 2 Հիւլէն 50 »

Թիւ 3 պրոշիւրը թէեւ հրաշալիք մը բայց ինչ ինչ նկատումներով զանց կընենք անունը յիշատակել կարճ ժամանակի մը համար. դինն է մէկ ֆրանք։

Դիմել Արշալոյսի Խմբագրութենէն զատ Հեղինակին հասցէին որ է.

Mr. A. Balian
Le Caire

ՍԱՐԳԻՍ Ց. ԹԱՇՃԵԱՆ

Նորոգիչ կարի մեքենաներու, փօնօկրաֆներու եւ կազի վառարաններու։

Տասներկու տարիներ «Սինկըր» Ընկերութեան քով մեքենայարդարութեան զբաղելէ յետոյ, այժմ զինուաճառ Զոխարիա Գոնսանթինոսի քով պաշտօնեայ է զէնքերու եւ մեքենայարդարման ճիւղին մէջ։

Կարգ մը բարեկամ յաճախորդներու խնդրանաց վրայ, պաշտօնէն դուրս ունեցած իր պարապոյ ժամերը պիտի տրամադրէ կարի մեքենաներու, փօնօկրաֆներու, կազի վառարաններու, նորոգութեանց եւ յարդարման։

Առ այժմ իրեն պէտք ունեցողները փոխանակ հոս ու հոն թափառելու՝ կրնան դիմել իր տունը Շարէ Մուհամէտ Ալի Թահթ-էլ Ռապէհ կրնան հարցնել նաեւ Մեծ Սրճարան Հայկականի Տնօրէններուն, եւ դարձեալ դիւրութեան համար քարթ բոստալով մը կրնան դիմել «Արշալոյսի» Տպարանին. նշանակելով իրենց հասցէն, փողոցին անունը եւ Տունին թիւը։

Իր նորոգութեանց վարձքը պիտի ստանայ իրեն յանձնուած աշխատութիւնները լրանալէ եւ փորձեր կատարուելէ յետոյ։

Կարի նոր մեքենաներ ալ կը վաճառէ։ 19 — 50

ՍԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՑՏԼԻՆԿԷՐ

Պավաքի փողոց. Խալնէտարի սեփականութիւն, Պրիսթոլ Օթէլի ճիշտ դիմաց Գաֆէ Տը Լա Պուրսի կից

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՄՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐներն են եւ ասոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է։

400 է աւելի վկայական եւ տեսայլներով վարձատրուած, երաշխաւորեալ մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է։
ՀԱՅԹԱՑԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ՀԱՅԹԱՑԹԻՉ ԱՆԳԼԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ
ՀԱՅԹԱՑԹԻՉ Ն. Բ. ԽՏԻՊԱՆԱՆ ՏԱՆ

Զրի դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԸՐ մեքենայից համար, յաճախորդատուներուն մէջ։

Վճարման դիւրութիւն

Փոխանակութիւն հիներու եւ նորոգութիւն ամէն կարգի Մեքենայից

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԸՐի յատկանշին



ԴԻՆ ՉԱՓԱՒՈՐ

ՕԹԷԼ ՏՐԱՊԻԶՈՆ

ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ

Քանթօ, Սուգուլ Մանկաի
3 Թէֆֆիեթ-էլ-Քալշանի փողոց 3
Մանկաի Մզկիթին դէմը, Թիւ 3
Պանդոկապետ – Մ. Դէորդեան

— o —

Կը յանձնարարուի արդոյ հասարակութեան և ի մասնաւորի մեր հայրենակիցներուն քաղաքին կեդրոնը գտնուող և օդաւէտ դիրքով սոյն պանդոկը, ուր յաճախողները պիտի գտնեն կատարեալ մաքրութիւն և փութական սպասարկութիւն։

Դիմեցէք անգամ մը և գոհ պիտի մնաք։

Գիները չափաւոր են։ 28–55

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մեր արտասահմանի և Եթովպիոյ բաժանորդներէն կը խնդրուի որ հաճին փութացնել իրենց բաժնեգիները, նկատելով որ տարուայն ինն երորդ ամիսը կը թեւակոխեն։

Այսպէսով մեր յարգելի բաժանորդները մեզի խնայած կըլլան մասնաւոր դիմումներու առթիւ ըլլալիք ծախքերէն և ժամավաճառութիւններէ։

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

ՇԱՐԷ ՄՈՒՀԱՄԷՏ ԱԼԻ, ՊԱՊ-ԷԼ-ԽԱԼԷ

Շարէ Մուհամէտ Ալիի ամբողջ զբօնին վրայ եղող նպարավաճառներուն մէջ, մեր վաճառատեղին միակն է որ ապրանքներու թարմութեան եւ մաքրութեան շնորհիւ մեծայուն դիրք մը բռնած է տարիներէ ի վեր։

Նպարեղէններու վերաբերեալ ամէն ինչ՝ փոքր թէ մեծ քանակութեամբ գնողներու համար, անթերի են սոյն վաճառատեղւոյն մէջ։

Մեր յաճախորդները գոհ թողելու նպատակաւ՝ սպառելի ապրանքներու ընտրութեան եւ գնումին ատեն շատ խնամք եւ նոյն իսկ բծախնդրութիւն կընենք։ Ուրիշն նպարեղէնի վերաբերեալ ամէն ապրանք թարմ է եւ մաքուր մեր քով։

Կշիռը, որուն համար ուրիշ շատ տեղեր գանգատանց պատճառ տուած է, մեր քով գոհունակութիւն միայն տուած է. վկայ մեր բազմաթիւ յաճախորդները, որոնք միշտ գոհ մնացած են։

Ձեր տունին նպարեղէնի բոլոր պէտքերուն համար դիմեցէք ի Պապ-էլ-Խալք՝ մեր վաճառատեղին եւ չ'պիտի զղջաք։ 16-41

ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍԱՐՃԵԱՆ